

Աղքատության ցուցանիշը Հայաստանում 2008թ. կազմում էր 23.5% եւ 6.4 տոկոսային կետով բարձր էր Թուրքիայի համեմատ: Նմանապես՝ Հայաստանում բարձր էր ծայրահեղ աղքատության ցուցանիշը (աղյուսակ 1): Սակայն երկու երկրների աղքատության ցուցանիշներն ուղղակիորեն համադրելի չեն, քանի որ հաշվարկվել են՝ ըստ տարբեր աղքատության գծերի եւ համարժեքության սանդղակների:

Միաժամանակ՝ երկու երկրներում հաշվարկներն իրականացվել են Համաշխարհային բանկի միեւնույն մեթոդաբանությամբ (World Bank, 2005), մասնավորապես՝ ըստ մեկ համարժեք չափահաս անձի սպառման ցուցանիշի: Վերջինը հաշվի է առնում չափահասների ու անչափահասների սպառման տարբերությունները եւ տնային տնտեսության մասշտաբից տնտեսումը: Ընդ որում՝ սպառման ցուցանիշները երկու երկրներում ներառել են ինչպես պարենային ու ոչ պարենային ապրանքների արժեքները, այնպես էլ երկարաժամկետ օգտագործման ապրանքների հաշվարկային արժեքը:

Համադրելի աղքատության ցուցանիշներ ստանալու համար Թուրքիայում կիրառված աղքատության գծերը վերահաշվարկվել ենք հայկական դրամով՝ հաշվի առնելով երկու երկրներում գնողունակության տարբերությունները, եւ Հայաստանում սպառման ցուցանիշները վերագնահատել ենք՝ հաշվի առնելով Թուրքիայում կիրառված համարժեքության գործակիցը:

Թուրքիայում աղքատության ընդհանուր գիծը չորս անձից բաղկացած տնային տնտեսության համար 2008-ին կազմել է 767 լիրա (Turkstat 2009): Այն լիրա/դոլար եւ դրամ/դոլար գնողունակության համարժեքության փոխարժեքներով համարժեք էր 157 հազ. դրամի: Համանմանորեն՝ Թուրքիայում պարենային աղքատության գիծը չորս անձից բաղկացած տնային տնտեսության համար 2008թ. կազմում էր 275 լիրա (Turkstat 2009) կամ 56.3 հազ. դրամ: Նշենք, որ պարենային աղքատության գիծն այն գումարն է, որն անհրաժեշտ է նվազագույն պարենային պահանջները բավարարելու համար եւ հաշվարկվում է որպես անհրաժեշտ միջին կալորիաների ու մեկ կալորիայի գնահատված արժեքի արտադրյալ: Իսկ աղքատության ընդհանուր գիծը ներառում է պարենային աղքատության գիծը եւ ոչ պարենային ապրանքների սպառումը:

Թուրքստատի կիրառած համարժեքության գործակիցը մոտարկել ենք՝ հաշվի առնելով չորս եւ մեկ անձից բաղկացած տնային տնտեսությունների աղքատության գծերի հարաբերությունը: Այն 2008-ին կազմել է 2.25 (Turkstat 2009), ինչը նշանակում է, որ Թուրքիայում չորս անձից բաղկացած տնային տնտեսության սպառումը համարժեք էր 2.25 չափահաս անձանց սպառմանը: Հետևաբար՝ մեկ համարժեք չափահաս անձի հաշվով աղքատության ընդհանուր գիծը Թուրքիայում 2008թ. կազմել է 69.8 հազ. դրամ (=157/2.25), իսկ պարենային աղքատության գիծը՝ 25 հազ. դրամ (=56.3/2.25) (աղյուսակ 2):

Հաշվի առնելով գնողունակության վերահաշվարկը՝ երկու երկրներում աղքատության պարենային գծերը համեմատաբար մոտ են: Թուրքիայում այն Հայաստանի համեմատ 1.4 անգամ բարձր է, իսկ հաշվի առնելով, որ Թուրքիայում միջին եկամուտը ավելի քան կրկնակի բարձր է Հայաստանի համեմատ, ակնկալելի է, որ սպառվող մեկ կալորիայի արժեքը Թուրքիայում ավելի մեծ պետք է լինի: Սակայն ընդհանուր աղքատության գծերը երկու երկրներում էապես տարբերվում են. այն Թուրքիայում Հայաստանի համեմատ 2.8 անգամ մեծ է: Ընդ որում՝ երկու երկրներում էլ կիրառվել է աղքատության ընդհանուր գծի որոշման միեւնույն՝ սպառողական զամբյուղի մեթոդը, ըստ որի՝ ընդհանուր սպառման մեջ ոչ պարենային ապրանքների մասնաբաժինը հաշվարկվում է որպես այն տնային տն-

տեսությունների ծախսերում ոչ պարենային ապրանքների մասնաբաժին, որոնց մեկ չափահաս անդամի հաշվով ընդհանուր սպառումը պարենային գծից փոքր-ինչ վեր է: Բայց երկու երկրներում ոչ պարենային ապրանքների մասնաբաժինը աղքատության ընդհանուր գծերի կառուցվածքում կազմել է էապես տարբեր մեծություն՝ Թուրքիայում 64%, Հայաստանում 32% (աղյուսակ 2): Ավելին՝ ԱՎԾ-ի տվյալներով, Հայաստանում 5-րդ քվանտիլային խմբի սպառման կառուցվածքում ոչ պարենային ապրանքների մասնաբաժինը 2008-ին կազմել է 65%, այսինքն՝ այնքան, որքան Թուրքիայում առաջին քվանտիլային խմբի սպառման կառուցվածքում էր (աղյուսակ 3): Ոչ պարենային ապրանքների մասնաբաժնի նման նշանակալի տարբերության արդյունքում էլ երկու երկրներում աղքատության ընդհանուր գծերը զգալի տարբերվում են, ինչի արդյունքում էլ աղքատության ցուցանիշները Հայաստանում, հաշվարկված ըստ թուրքական ընդհանուր գծի, էապես բարձր են:

Հայաստանում 2008թ. տնային տնտեսությունների անդամների միջին թիվը առկա բնակչության հաշվարկով կազմել է 3.8 մարդ (ԱՎԾ 2009): Զանի որ ԱՎԾ կողմից կիրառվող համարժեքության եւ մասշտաբից տնտեսման գործակիցներով երկու չափահասից եւ երկու անչափահասից կազմված տնային տնտեսությունը համարժեք է 2.83 չափահաս անձի², ապա միջին տնային տնտեսությունը (3.8 մարդ) մոտավորապես համարժեք է 2.7 չափահաս անձի: Թուրքիայում տնային տնտեսությունների անդամների միջին թիվը 2008թ. կազմել է 4 մարդ (Թուրքիայում բնակչության թիվը 2008թ. տվյալներով եղել է 71.5 միլիոն (Turkstat 2009c), իսկ տնային տնտեսությունների թիվը՝ 17.8 մլն (Turkstat 2009b): Հետևաբար՝ Թուրքիայում միջին տնային տնտեսությունը համարժեք է 2.25 չափահաս անձի: Զանի որ երկու երկրներում կիրառվող համարժեքության սանդղակները տարբեր են, ապա սպառման ցուցանիշները հնարավորինս համադրելի դարձնելու համար (որքանով դա թույլ են տալիս խմբավորված տվյալները) Հայաստանում մեկ համարժեք չափահաս անձի հաշվով սպառման ցուցանիշները բազմապատկել ենք 1.2-ով (=2.7/2.25):

Միաժամանակ՝ Հայաստանում մեկ համարժեք չափահաս անձի հաշվով սպառման ցուցանիշները 2008թ. ըստ ղեցիային խմբերի ԱՎԾ-ն հրապարակել է 2004թ. աշնանային զեներով (ԱՎԾ 2009, աղյուսակ A3.2): Դրանք 2008թ. զեներով վերահաշվարկելու համար հաշվի ենք առել այն, որ 2008-ին ընդհանուր միջին սպառումը 2004թ. աշնանային զեներով կազմել է 35,584 դրամ (ԱՎԾ 2009, աղյուսակ A3.2), իսկ 2008թ. աշնանային զեներով՝ 42,630 դրամ (ԱՎԾ 2009, աղյուսակ A3.10): Հետևաբար՝ այդ ժամանակահատվածում զեների կուտակային փոփոխությունը կազմել է 1.2 (=42,630/35,584):

Արդյունքում՝ Հայաստանում 2008թ. ըստ ղեցիային խմբերի մեկ չափահաս անձին համարժեք սպառման ցուցանիշները ստանալու համար դրանք 2004թ. զեներով արտահայտված արժեքները բազմապատկել ենք զեների ինդեքսով (1.2) եւ համարժեքությունը ճշգրտող գործակիցով (1.2) (աղյուսակ 5):

Պարզելու համար, թե Հայաստանի բնակչության որ մասը 2008թ. կորակվեք աղքատ, եթե ընդհանուր եւ ծայրահեղ աղքատության ցուցանիշները Հայաստանում հաշվարկվելին ըստ Թուրքիայում կիրառված աղքատության գծերի, անհրաժեշտ է գնահատել Լորենցի կորի տեսքը, որը պատկերում է եկամտի կուտակային L(p) մասի ֆունկցիոնալ կախվածությունը բնակչության կուտակային p մասից, երբ եկամտները դասավորված են աճողական:

Լորենցի կորի պարամետրային գնահատման համար առաջարկվել են մի շարք ֆունկցիոնալ տեսքեր (Kakwani եւ Podder, 1976; Rasche եւ այլք, 1980; Kakwani, 1980; Gupta, 1984; Villasenor եւ

ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ԲԱՃԱՐՁԱԿ ԶՈՒՅՆՆԻՇՆԵՐԻ ՀԱՄԱԴՐՈՒՄԸ

**Արման
ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**
ԵՊՀ
միջազգային
տնտեսական
հարաբերությունների
ամբիոնի
դասախոս,
տնտեսագիտության
թեկնածու



Աղքատության ցուցանիշները Հայաստանում և Թուրքիայում (%) Աղյուսակ 1.

	Աղքատ		Ծայրահեղ աղքատ	
	2004	2008	2004	2008
Հայաստան	34.6	23.5	6.4	3.1
Թուրքիա	25.6	17.1	1.3	0.5

Աղբյուրը՝ ԳՅ ԱՎԾ 2009՝ Turkstat 2009

Աղքատության գծերը մեկ համարժեք չափահաս անձի հաշվով (2008թ.) Աղյուսակ 2.

Աղքատության գիծ	Հայաստանում				Թուրքիայում			
	դրամ	PPP դրամ ¹	ընթացիկ դրամ ²	լիրա	PPP դրամ ¹	ընթացիկ դրամ ²	դրամ ¹	
Ընդհանուր	25,188	129	82	341	358	263	69,796	
Պարենային	17,232	88	56	122	128	94	24,971	
Պարենային / ընդհանուր	0.68			0.36				

¹ գլոբալիզացիայի համարժեքության փոխարժեքով
² ընթացիկ փոխարժեքով
 Աղբյուրը՝ ԳՅ ԱՎԾ 2009, Turkstat 2009, UNECE 2009 և հեղինակի հաշվարկներ

Հայաստանում և Թուրքիայում սպառման կառուցվածքում արքանային և ոչ արքանային սպառանքների կշիռները՝ ըստ քվանտիլային խմբերի (2008թ., %) Աղյուսակ 3.

Քվանտիլային խումբ	Ամենաաղքատ		2		3		4		5		Ընդամենը	
	AM	TU	AM	TU	AM	TU	AM	TU	AM	TU	AM	TU
Պարենային	66	36	60	30	54	26	50	23	35	16	48	23
Ոչ արքանային	34	64	40	70	46	74	50	77	65	84	52	77

AM - Հայաստան, TU - Թուրքիա
 Աղբյուրը՝ ԳՅ ԱՎԾ 2009, աղյուսակ Ա3.10, Turkstat 2009b և հեղինակի հաշվարկներ

Հայաստանում և Թուրքիայում աղքատության անվանաբան գծերի հարաբերությունը մեկ շնչի հաշվով միջին անհատական անվանաբան շնչին և մեկ համարժեք չափահաս անձի հաշվով միջին անհատական ընթացիկ անվանաբան սպառումը (2008թ., %) Աղյուսակ 4.

Աղքատության գիծը	Մեկ շնչի հաշվով միջին անհատական ՀԱՀ-ի նկատմամբ		Մեկ համարժեք չափահաս անձի հաշվով միջին անհատական սպառումը	
	Հայաստան	Թուրքիա	Հայաստան	Թուրքիա
Ընդհանուր	27	30	59	47
Պարենային	18	11	40	17

Աղբյուրը՝ ԳՅ ԱՎԾ 2009, IMF 2009, Turkstat 2009 – 2009c և հեղինակի հաշվարկներ

Մեկ չափահաս անձին համարժեք սպառումը Հայաստանում 2008թ. (դրամ) Աղյուսակ 5.

Դեցիլային խումբ	2004թ. աշնանային գներով	2008թ. աշնանային գներով՝ հաշվի առնելով համարժեքության ճշգրտումը
1-ամենաաղքատ	15,710	22,622
2	19,986	28,780
3	22,461	32,344
4	25,837	37,205
5	28,892	41,604
6	32,173	46,329
7	36,222	52,160
8	41,694	60,039
9	50,861	73,240
10-ամենաաղքատ	82,046	118,146
Միջին	35,588	51,247

Աղբյուրը՝ ԳՅ ԱՎԾ 2009, աղյուսակ Ա3.2, Turkstat 2009 և հեղինակի հաշվարկներ

Arnold, 1989; Ortega և այլք, 1991, Chotikapanich, 1993 և այլն): Մենք Հայաստանում 2008թ. Լորենցի կորի տեսքը գնահատել ենք (հիմնվելով ըստ դեցիլային խմբերի մեկ չափահաս անձին համարժեք սպառման ցուցանիշների վրա) Լորենցի կորի Բետա (Kakwani, 1980) և Ընդհանուր քառակուսային (Villasenor և Arnold, 1989) ֆունկցիոնալ տեսքերի հիման վրա, որոնք սխալների քառակուսիների գումարի նվազագույնը լինելու չափանիշով ավելի լավ արդյունքներ են տվել (Ravallion և Huppi, 1989; Cheong, 1999): Բետա Լորենցի կորի ֆունկցիոնալ տեսքը հետևյալն է՝ $L(p) = p - \alpha p^\beta (1-p)^\beta$ (Kakwani, 1980), իսկ Ընդհանուր քառակուսային Լորենցի կորի ֆունկցիոնալ տեսքը հետևյալն է՝ $L(L-L) = a(p^2 - L) + bL(p-1) + c(p-L)$ (Villasenor և Arnold, 1989):

Արդյունքում, հիմնվելով Թուրքիայում կիրառված աղքատության գծերի և Հայաստանում սպառման ցուցանիշների վերը նկարագրված վերահաշվարկի վրա, վերագնահատել ենք Հայաստանում Ֆոսթեր-Գրիեր-Թորբեք (ՖԳԹ) ցուցանիշները (Foster, Greer, & Thorbecke, 1984), որոնք արտահայտում են աղքատության մակարդակը, խորությունը և սրությունը (աղյուսակ 6): Աղքատության մակարդակի ցուցանիշը ցույց է տալիս սպառման մեծությամբ աղքատության գծից ներքե գտնվող անձանց կշիռն ընդհանուր բնակչության թվում: Աղքատության խորության ցուցանիշը ցույց է տալիս,

Ֆոսթեր-Գրիեր-Թորբեք ցուցանիշների վերահաշվարկը Հայաստանում (2008թ., %) Աղյուսակ 6.

Աղքատության գիծ	P0	P1	P2
Ընդհանուր (69,796 դր.)*	83.5	34.1	16.7
Պարենային (24,971 դր.)*	7.8	1.0	0.2

* Աղքատության ընդհանուր գծի համար սխալների քառակուսիների գումարը փոքր է եղել Լորենցի կորի Ընդհանուր քառակուսային տեսքի դեպքում, իսկ աղքատության պարենային գծի համար՝ Լորենցի կորի Բետա ֆունկցիոնալ տեսքի դեպքում: Աղբյուրը՝ հեղինակի հաշվարկներ

թե աղքատների սպառումը որքանով է ցածր աղքատության գծից: Աղքատության սրության ցուցանիշն արտահայտում է աղքատների միջև սպառման անհավասարության չափը: ՖԳԹ ցուցանիշները հաշվարկվում են հետևյալ բանաձևով՝ $P(\alpha) = 1/n \sum_{i=1}^n \max((z - c_i)/z, 0)^\alpha$ որտեղ $\alpha = 0, 1, 2, z$ -ը աղքատության գիծն է, c_i -ն i -րդ անձի սպառումը, n -ը՝ բնակչության թիվը: Ստացված արդյունքները ակնհայտ ցուցանում են, որ Հայաստանում տնային տնտեսությունները թերազնահատում են իրենց սպառման իրական ծավալները:

1. Դոլարի նկատմամբ լիրայի և դրամի գնդողնակության համարժեքության փոխարժեքները 2008թ. համապատասխանաբար կազմում էին 0.9524 լիրա/դոլար և 194.9376 դրամ/դոլար (UNECE 2009):
 2. ԱՎԾ-ն տնային տնտեսության չափահաս անձին համարժեք անդամների թիվը գնահատում է $(A + \alpha C)^\beta$ բանաձևով, որում A-ն չափահաս, իսկ C-ն անչափահաս անդամների թիվն է, α -ն համարժեքության (ԱՎԾ-ն գնահատել է 0.65), իսկ β -ն մասշտաբից տնտեսական գործակիցն է (ԱՎԾ-ն գնահատել է 0.87):

Օգտագործված գրականություն

- Cheong K. (1999), A Comparison of Alternative Functional Forms for Parametric Estimation of the Lorenz Curve, Working Paper, University of Hawaii at Manoa.
- Chotikapanich D. (1993), A comparison of alternative functional forms for the Lorenz curve, Economics Letters, 41 (2), 129-38.
- Foster J., Greer J., & Thorbecke E. (1984), A Class of Decomposable Poverty Measures, Econometrica, 52 (3), 761-6.
- Gupta M. (1984), Functional Form for Estimating the Lorenz Curve, Econometrica, 52 (5), 1313-4.
- IMF (2009 Oct.), World Economic Outlook, Database.
- Kakwani N. (1980), On a Class of Poverty Measures, Econometrica, 48 (2), 437-46.
- Kakwani N. & Podder N. (1976), Efficient Estimation of the Lorenz Curve and Associated Inequality Measures from Grouped Observations, Econometrica, 44 (1), 137-48.
- Ortega P., Martin G., Fernandez A., Ladoux M., & Garcia A. (1991), A New Functional Form for Estimating Lorenz Curves, Review of Income & Wealth, 37 (4), 447-52.
- Rasche R., Gaffney J., Koo A., & Obst N. (1980), Functional Forms for Estimating the Lorenz Curve, Econometrica, 48 (4), 1061-2.
- Ravallion M. & Huppi M. (1989), Poverty & Undernutrition in Indonesia during the 1980s, Working Paper, World Bank.
- Turkstat (2009, Dec. 1), Results of the 2008 Poverty Study, Press Release #205.
- Turkstat (2009b), Household Consumption Expenditure by Quintiles Ordered by Expenditure, Household Budget Survey Results On Consumption Expenditures.
- Turkstat (2009c, Jan. 26), Address Based Population Registration System, 2008, Population Census Results, Press Release #14.
- Turkstat (2009, Sep. 17), Results of Household Consumption Expenditures, 2008, Press Release #166.
- Villasenor J. & Arnold B. (1989), Elliptical Lorenz curves, Journal of Econometrics, 40 (2), 327-38.
- World Bank (2005), Introduction to Poverty Analysis, Washington DC: World Bank Institute.
- UNECE (2009), Statistical Database, UN Economic Commission for Europe. 18. ԳՅ ԱՎԾ (2009), Հայաստանի սոցիալական պատկերը և աղքատությունը, Երևան 2009